

Բոլոր լիրիկ բանաստեղծները կրկնել են սաղմոսները: Լեւրմոնտովի ու Պուշկինի «Մարգարէն» նոյնպէս շատ ազդեցութիւն են ունեցել մեր բոլոր քնարերգուների վերայ: Տէրեանը նոյնպէս մի այդպիսի սիրուն ոտանաւոր ունի:

— Նորից կթողնեմ քաղաքն աղմկոտ,
Ու ճամբայ կընկնեմ յաւէտ միայնակ,
Անխօս կմարի երեկոն աղօտ
Կպառկեմ դաշտում կանաչ ծառի տակ:

Անտուն անցորդից կխնդրեմ ես հաց,
Պայծառ աղբիւրի ջուրը կը խմեմ.
Երկինք կյառեմ աչքերս յոգնած,
Ինքոյճ ծաղկանց հետ խաղաղ կքնեմ:

Այսպիսով Տէրեանի երգերի մօտիւնները շատ աղքատ են, նա մի բանի երգ ունի անհատական և եսական սիրոյ մասին, մի փոքր պեսսիմիզմ և նիցշէականութիւն (դէ մեր ժամանակում առանց անարխիզմի և խելագարութեան հօ չի կարելի), բայց և ձգտում դէպի անհունը, այսինքն բանաստեղծական աւիւն, բայց անորոշ: Լեզուն շատ կոկ է, ոչ գոեհիկ, այլ գրականական և մի փոքր վերացական: Երբոր Տէրեանը անարխիզմից կանցնի գիտակցութեան և կհասկանայ, որ անհատական և եսական սիրոյ երգիչը չէ, որ գրականութեան պատմութեան մէջ իբրև գաղափարի զինուոր պիտի անմահանայ և կսկսի զգալ և արտայայտել ուրիշների սէրն ու ատելութիւնը, կսկիծն ու խինդը ու կեանքը իւր բոլոր դառնութիւններով և ուրախութիւններով, այն ժամանակ մենք կասենք, որ նա բանաստեղծ է, իսկ այժմ մի սկսնակ, բայց հայ լեզուին տիրապետող և անձնական զգացմունքներով տարուած մի եսական երիտասարդ գրող է:

Գ. ՆՆԳԻԲԱՐԵԱՆ

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ռ. Պատկանեան. Զախու. փոխադրեց Ստ. Լիսիցեան, Տրփ-խիս 1909 20 4.

Атрпегъ. Имамат. историческое изслѣдование. Александрополь 1909, 1 р.

Դ. Պետրով քահ. Մեծ հովիւ. Թարգ. Գր. ք. Նոր-Արեւեան. Վաղարշապատ 1908 15 4.

Հարստման—Ռուզամի. Իրաշըջանների վերածւած Թւաբա-

նական խնդիրների ժողովածու. Դ. ա. փոխադրեց Յ. Տէր-Միրաքեան, Թիֆլիս 1909 35 կ.

Ա. Զիլինգարեան և Ռ. Ռաշմաճեան, Դասընկեր Ա. տարի այբբենարան ընթերցարան. Թիֆլիս 1909 50 կ.

Դադեան ամուսիններ, Դասադիրք բնագիտութեան, ա. և բ. հատոր. Թիֆլիս 1909 55 կ. և 50 կ.

— Հնդհանուր պատմութեան դասագիրք, ըստ Վինոգրադովի. Թիֆլիս 1909, գ. 45 կ.

Ախիլ Լուիա. Սոցիոլոգիա. գերմ. Թարգմ. Pessimist. Թիֆլիս 1909 60 կ.

Ալ. Աբէլեան. Գիւղի վարժապետ, Թիֆլիս 1909 35 կ.

— Գօչտի երազը. նոյն 20 կ.